

ԽԷ. — Տեսայ զիմ հոգոյս հոգին որ մեռաւ ի հող թաղեցաւ,
Դարձեալ իմ սիրուն համար նայ հարեալ ու շատ դատեցաւ:
Ի սուր և ի կտուր երեկ ու քարով նա քարկոծեցաւ,
Ի հուր և ի գեհէն մտաւ իմ հոգոյս հոգի ջանեցաւ:

ԽԸ. — Երկուն ընդ իրար կուին մէկ ի մէկ չնմանին,
Մէկեկ ի նոցա մէջին էր մեռած և անգած ի տեղին:
Այլ ոք որ զկուին արին շատ արին ի վայր թափեցին,
Ի ի յայն արինէ ցաւդին շունչ տուաւ անկած մեռելին,
Ծեր մայլ բարեխաւս բերին որ եպագ զերես մեռելին,
Եւ յայն համբուրէ ծերին լոյս ծագեաց մթան զիշերին:

✓ ԽԹ. — Յանիրաւ մարդոյն ի զատ կաց ու հեռի,
Թէ քեզ հայր է կամ եղբայր ու կամ քեռի:
Հետ փշին մի փաթաթիր զինչ հետ ուռի,
Թէ չէ ի ձեռքդ բեւեռի և խոց լինի:

Կ'աւարտեմ այս տաղաշարքը, ուր որոշ կ'երեւի այս քառեակներուն բնական խմբակներու պատկանիքը: Անոնք անշատ քառեակներ են, բայց ոչ բոլորովին իրարմէ անկախ: Եւ այդ պատճառաւ իսկ պէտք է անոնց բնագիծները կամ օրինակութիւնները եղածին պէս հրատարակել, եւ յետոյ կատարել կարեւոր դիտողութիւններ: Մինչեւ ցայժմ Քուչակի քառեակներուն հրատարակիչները իրենց դատողութեան համաձայն խմբաւորումներու վերածած են Քուչակեան քառեակները, եւ այդպէս ալ հրատարակած. ատիկա բուն քննական աշխատութեանց եւ բնագրին կազմութեան համար անարժէք կը նկատեմ, քանի որ կարծիքներ եւ դատողութիւններ կրնան խնդրոյ նիւթ ըլլալ եւ իրարմէ տարբերիլ, մանաւանդ բնագրին հետ որ եւ է կապ չունենալ:

Տաղաշարքս որ հանդիպածներու մէջ երկարագոյններէն մին է, ցոյց կու տայ որ անոնց հեղինակը զանոնք որոշ կարգով մը իրարու ետեւէ շարած է: Օրինակ, վերի տաղաշարքիս մէջ Սիրոյ քառեակներ բնաչկան, եւ ալ աւելի վերլուծական տաղեր են, կրօնական հասկացողութեամբ եւ փիլիսոփայութեամբ, այլաբանական պատկերներով որոնք ժողովրդական եւ ժամանակին գործածական ըլլալով հանդերձ, հեղինակէն

առնուած եւ քիչ կամ շատ ինքնատուածեամբ զարդարուած գործածուած են:

Անոնք ժողովրդական հեղինակութիւն չեմ նկատեր, այլ որոշ մէկ հեղինակի մը արտադրութիւնն են, որոնք ժողովուրդէն սրտաբաց ընդունուած եւ առատօրէն գործածուած, այնքան յաճախութեամբ որ գրեթէ ժողովրդականացած են, երեւոյժ մը որ պատահած է ու կը պատահի միշտ: Ով որ ալ եղած ըլլայ հեղինակն այդ տաղերուն՝ սա որոշ է որ մէկ հատ էր, իր նկարագիրը որոշ կ'երեւի իր քառեակներուն մէջ, որոնք՝ հակառակ ժողովուրդէն իւրացուած եւ փոփոխակներու ենթակուած ըլլալուն՝ դարձեալ պահած են հեղինակին ինքնատիպ գծերը: Այդ գծերը երբեմն հակասող են, բայց ատիկա իսկ ցոյց կու տայ իր միակ հեղինակութիւն մը ըլլալը: Նոյնիսկ Օմար Խայեամ ինքնիրեն կը հակասէ: Ասիկա անխուսափելի է բոլոր ներշնչուած նիւթերու համար, ներշնչումը շատ անգամ դատողութենէն անջատ է: Այս պատճառաւ իսկ այս քառեակներուն հեղինակը, որոնց Քուչակի քառեակներ կասկածելի անունը տուած ենք ու կու տանք, շատ անգամ դատողութենէն հեռացած է եւ մղուած է միայն արձագանգ ըլլալու իր աւանդապաշտութեան, սրտին, զգացումներուն եւ միւս ներշնչող աղբիւր-